

**ԿԱՊԸ ԲՍՀԿՊ-ՆԵՐԻ ՀԵՏ**

Կան 33 ԲՍՀԿՊ-ներ, որոնք աշխատում են ՆՀՈՒ 25 ոստիկանական բաժանմունքներում: Դուք կարող եք հանդիպում նշանակելու համար գանգահարել կամ այցելել նրանց ողջ շաբաթվա ընթացքում ժամը 09:00–ից մինչև 17:00-ն: ԲՍՀԿՊ-ները տեղակայված են հետևյալ ոստիկանական բաժանմունքներում.

**Ashfield**  
14 Victoria Street  
Ashfield 2131  
9797 4099

**Fairfield**  
40-42 Smart Street  
Fairfield 2165  
9728 0399

**North Shore**  
63 Archer Street  
Chatswood 2067  
9414 8499

**Bankstown**  
2 Meredith Street  
Bankstown 2200  
9783 2199

**Flemington**  
Corner Susan & Queen Street  
Auburn 2144  
9646 8699

**Parramatta**  
95 Marsden Street  
Parramatta 2150  
9633 0799

**Blacktown**  
11 Kildare Road  
Blacktown 2148  
9622 0000

**Green Valley**  
193-195 Wilson Road  
Green Valley 2168  
9607 1799

**Rosehill**  
2 Carlton Street  
Granville 2142  
9897 4199

**Burwood**  
Belmore Road  
Burwood 2134  
9745 8499

**Holroyd**  
15-17 Memorial Avenue  
Merrylands 2160  
9897 4899

**Ryde**  
8 Victoria Road  
Gladesville  
9879 9699

**Cabramatta**  
243-249 Cabramatta Rd West,  
Cabramatta 2166  
9725 8999

**Kuring-gai**  
292 Pacific Highway  
Hornsby 2077  
9476 9799

**St. George**  
36-38 Ormonde Parade  
Hurstville 2220  
9375 8599

**Campbelltown**  
65 Queen Street  
Campbelltown 2560  
4620 1201

**Liverpool**  
148 George Street  
Liverpool 2170  
9821 8444

**St Marys**  
38-42 King Street  
St Marys 2760  
9677 7499

**Campsie**  
58 Campsie Street  
Campsie 2194  
9789 0999

**Macquarie Fields**  
10 Brooks Street  
Macquarie Fields 2564  
9605 0479

**Sydney City**  
129 Day Street  
Darling Harbour 2000  
9265 6499

**Eastern Beaches**  
136 Maroubra Road  
Maroubra 2035  
9349 9299

**Mt. Druiitt**  
Cnr Luxford Road & Kelly Close  
Mt. Druiitt 2770  
9675 8623

**Wollongong**  
Cnr Church & Market Streets  
Wollongong 2500  
4226 7899

Ոստիկանությունը Ձեզ աջակցելու նպատակով կարող է հեռախոսով կամ անհատապես զրուցելիս անկախ մասնագետ-թարգմանիչ տրամադրել: Բոլոր լեզուները ներառյալ խուլ-համբերի ավստրալական տարբերակը, /AUSLAN/ հասանելի են ցերեկվա և գիշերվա բոլոր ժամերին: Ընդամենը հայտնեք ոստիկանությանը, թե որ լեզվով եք խոսում:

 **Triple Zero (000)**  
For emergencies or life threatening situations.

 **Police Assistance Line (131 444)**  
For non emergencies.

 **Crime Stoppers (1800 333 000)**  
To provide crime information. It can be anonymous.

Follow us on  facebook.com/nswpoliceforce  
 twitter.com/nswpolice  youtube.com/thenswpolice  
or visit [www.police.nsw.gov.au](http://www.police.nsw.gov.au)



**NSW Police Force**

# Բազմամշակութային համայնքի կապերի պատասխանատուները





ՆՀՈՒ (Նոր Հարավային Ուելսի) ոստիկանական ուժերի (NSW Police Force) առաջնային նպատակն է հանցագործություններն ու բռնությունը նվազեցնելը և հանրային անվտանգության բարելավումը: Դրա համար ոստիկանությանն անհրաժեշտ է սերտորեն աշխատել համայնքի բոլոր անդամների հետ՝ ներառյալ մշակութային և լեզվական տարբեր (ULS) հիմքեր ունեցողներին:

Բազմամշակութային համայնքի կապերի պատասխանատուները (ԲՄՀԿՊ) ՆՀՈՒ ոստիկանական ուժերի համար աշխատող այն քաղաքացիական անձնակազմն է, որն օգնում է համայնքներին՝ ոստիկանության նկատմամբ վստահություն և հավատ սերմանել:

Չնայած, որ ԲՄՀԿՊ-ները ոստիկաններ չեն, նրանք պատրաստված մասնագետներ են, որոնք աշխատում են ոստիկանների հետ կողք կողքի՝ խորհուրդներ տալով համայնքային խնդիրների վերաբերյալ և այն մասին, թե ինչ ուղիներով ավելի լավ կարելի է կապեր հաստատել և հասկանալ իրենց տեղական համայնքների մտահոգություններն ու կարիքները:

ԲՄՀԿՊ-ներն աջակցում են ոստիկանությանը, երբ այն շփման մեջ է մտնում այնպիսի մարդկանց հետ, որոնք իրենց մշակութային, կրոնական և լեզվական կարիքներին սատարելու համար հավելյալ օգնության և ծառայությունների անհրաժեշտություն են զգում: Նրանք երաշխավորում են, որ համայնքներին հասանելի լինեն այնպիսի ոստիկանական ծառայություններ, որոնք մշակութային և լեզվական առումով զգայուն և համապատասխան են:



ԲՄՀԿՊ-ները նաև օգնում են համայնքներին՝ ոստիկանության հետ շփման մեջ գտնվելիս իմանալ իրենց իրավունքներն ու պարտականությունները և կարող են օգնել բացատրելու, թե ինչպես է ոստիկանությունն արձագանքում և վերահսկում հանցագործություններն ու համայնքի անվտանգությունը:

ԲՄՀԿՊ-ները կարող են մատուցել հետևյալ ծառայությունները.

- օգնել համայնքի անդամներին և անհատներին՝ ոստիկանությանը հայտնելու հանցագործությունների մասին
- սատարել և աշխատել հանցագործության գոհերի, նրանց ընտանիքների և համայնքի հետ
- սատարել ընտանեկան բռնության գոհերին դատարաններում
- աջակցել ոստիկանություն դիմումներ ներկայացնելուն և համապատասխան ոստիկանական ծառայություններից օգտվելուն
- աջակցել այլ գործակալություններ դիմումներ ներկայացնելուն և նրանց ծառայություններից օգտվելուն
- համայնքներին հանցագործությունների կանխարգելման, անվտանգության և ոստիկանական այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել և անձնական ու տեղեկատվական գրույցներ վարել
- աշխատել համայնքների օգնությամբ հանցագործությունների կանխարգելման նախագծերի և ծրագրերի վրա
- կանոնավոր շփումներ ծավալել և գործընկերային հարաբերություններ ստեղծել համայնքների անդամների, կազմակերպությունների և համայնքային առաջնորդների հետ
- աշխատել խոցելի համայնքների հետ, ինչպես, օրինակ՝ նոր ժամանած միգրանտները, երիտասարդները, տարեցները, կանայք, նոր և ձևավորվող համայնքները, արտասահմանցի ուսանողները, փախստականները և ապաստան փնտրողները
- տեղական համայնքային և միջգերատեսչական ֆորումներում և ցանցերում ներկայացնել ոստիկանությանը
- ոստիկանական հարցերի վերաբերյալ կոնֆիդենցիալ խորհրդատվություն և աջակցություն տրամադրել

ԲՄՀԿՊ-ների մեծ մասը խոսում է համայնքի մեկ կամ ավելի լեզուներով և անհրաժեշտության դեպքում կարող է նաև հիմնական լեզվական աջակցություն տրամադրել:

Հանցագործությունները նվազեցնելու և կանխելու, ինչպես նաև մարդկանց անվտանգությունն ապահովելու գործում ոստիկանությունը հենվում է այն բանի վրա, որ համայնքները կհայտնեն հանցագործությունների մասին և տեղեկություններ կտրամադրեն իրենց և իրենց հարևանների անվտանգության վերաբերյալ: Ձեր ԲՄՀԿՊ-ները կարող են օգնել Ձեզ՝ ոստիկանությանը հայտնելու հանցագործությունների և անվտանգության խնդիրների մասին:

